միջոցով կտեղեկացվեք մեր որոշման մասին: Նամակում ձեզ կտեղեկացվի նաև այն մասին, թե ինչպես սկսեք օգտագործել ձեր առողջապահական ապահովագրությունը կամ, եթե համաձայն չեք մեր որոշմանը, ինչպես կարող եք բողոքարկել: Եթե դուք կամ ձեր ընտանիքի անդամներից որևէ մեկը իրավասու է Medi-Cal ստանալու, դուք փոստով կստանաք Medi-Cal նպաստների Ինքնության Քարտ (Medi-Cal Benefits Identification Card, BIC): Դուք կարող եք ձեր BIC քարտն ստանալ նախքան նամակը՝ հաստատելով Medi-Cal-ին ձեր իրավասու լինելը, այդ դեպքում, դուք կկարողանաք օգտագործել այն անմիջապես որ ստանաք: Եթե դուք ունեք հին BIC, այն կվերաակտիվացվի: Եթե դուք նախկինում BIC ունեցել եք , բայց ներկայումս չունեք այն, ձեր դիմումնագրի հավանության արժանանալուց հետո, դուք կարող եք կապվել ձեր քաունթիի մարդկային ծառայությունների գործակալության հետ՝ նոր քարտի դիմելու համար:

Ի՞նչ կպատահի, եթե ես սպասելու ընթացքում առողջական խնամքի կարիք ունենամ:
Եթե դուք անմիջական բժշկական խնամքի կարիք ունեք, դուք պետք է բժշկին, առողջապահական դարմանատուն կամ հիվանդանոց այցելեք: Վստահ եղեք պահել ձեր վճարումների համար կատարած բոլոր ստացականները: Եթե իրավասու լինեք Medi-Cal ստանալու, հնարավոր է, որ դուք կարողանաք ձեր վճարած առողջապահական ծախսերի համար հատուցում ստանալ: Եթե դուք խնամքի կարիք ունեք և այցելում եք Medi-Cal ընդունող բժշկի կամ դարմանատուն, ապա եթե իրավասու լինեք որպես ապահովագրություն Medi-Cal ստանալու, նրանք կարող է օգնեն ձեզ հատուցում ստանալու հետագայում: Եթե շտապ բժշկական խնամքի կարիք ունեք և չեք կարողանում առանց ապահովագրության ստանալ այն, կապվել ձեր քաունթիի մարդկային ծառայությունների գործակալության հետ, ներփակ գտնվող քաունթիի ցուցակում եղած հեռախոսահամարով և խնդրեք նրանցից ձեր շտապ բժշկական կարիքի պատճառով ավելի արագ վերանայել ձեր դիմումնագիրը:

Ի՞նչ կպատահի, եթե ես սպասելու ընթացքում առողջական խնամք ստանալու նպատակով բժշկական ծախսեր եմ արել:
Եթե պարզվի, որ դուք իրավասու եք Medi-Cal-ի, ձեր ապահովագրության ժամկետը կսկսվի այն ամսից, երբ դիմել եք: Դուք կարող եք ձեր բժշկից խնդրել, որ Medi-Cal-ից պահանջի ձեր ստացած առողջապահական ծախսերի համար, որն ստացել եք որոշմանն սպասելու ընթացքում: Դուք նույնպես կարող եք հատուցում ստանալ, եթե վճարել եք բժշկական ծախսերի համար: Նաև, եթե Medi-Cal ստանալու հավանության եք արժանացել և հետնյալ ապահովագրությանն իրավասու եք, հնարավոր է, որ Medi-Cal-ը ձեզ օգնի առողջապահական այն ծախսերի մեծ մասի համար, որն ստացել եք ձեր դիմելու ամսից երեք ամիս առաջ: Հավելյալ տեղեկությունների համար այցելեք www.healthconsumer.org կայքէջը:

Եթե դուք ներկայում ունեք վճարված բժշկական բիլեր, դուք կարող եք.

1) Զանգահարել բիլի վրայի հեռախոսահամարով և նրանց ասել, որ դուք սպասում եք Medi-Cal-ի համար իրավասու լինելու որոշմանը: Նրանցից խնդրեք, որ ձեր բիլը չուղարկեն պատքերի հետապնդման և հավաքման գործակալություն (collection agency): Դուք նույնպես կարող եք նրանց ուղարկել այս նամակի պատճենը:
2) Դուք նույնպես պետք է կապվեք ձեր քաունթիի մարդկային ծառայությունների գործակալության հետ, եթե որոշվի, որ իրավասու եք Medi-Cal-ի, տեղեկացնելու նրանց ձեր ունեցած բիլերի մասին և այն ամսաթվերը երբ ստացել եք բժշկական խնամքը (ոչ բիլն ստանալու ամսաթիվը): Սա կնպաստի որոշելու համար, թե արդյո՞ք դուք իրավասու եք հետնյալ ապահովագրության համար:

Արդյ՞օք պարտավոր կլինեմ ապահովագրություն չունենալու համար հարկային տուգանք վճարել քանի դեռ սպասում եմ:
Անցնող ամիսներին ապահովագրություն չունենալու համար դուք հարկային տուգանք չեք վճարի, որովհետև դուք դիմել եք 2014թ բաց անդամագրության ընթացքում և դեռևս մեզանից պատասխանի եք սպասում: Համաձայն Առողջապահական Խնամքի նոր օրենքի, մարդկանց մեծամասնությունը պետք է առողջապահական ապահովագրություն ունենա այս տարի, այլապես 2015թ ապրիլին հարկային տուգանք կվճարի: Դուք նույնպես կարող եք խուսափել հարկային տուգանք վճարելուց, եթե դուք այս տարում ապահովագրություն չկարողանալ ունենալու մյուս պատճառներն ունեք: Եթե դուք հարցեր ունեք, կարող եք կապվել Health Consumer Alliance-ի հետ 1-888-804-3536 հեռախոսահամարով:

Ո՞րտեղից կարող եմ հավելյալ տեղեկություն ունենալ իմ դիմումնագրի վերաբերյալ:
Ձեր դիմումնագրի վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար զանգահարեք ձեր քաունթիի մարդկային ծառայությունների գործակալությանը, ներփակ գտնվող քաունթիի ցուցակում եղած հեռախոսահամարով: Իմացեք, որ շատ կարևոր է, որ որոշման վերաբերյալ սպասման ընթացքում դուք լրացուցիչ դիմումնագրեր չներկայացնեք: Դա անելը կարող է նախկինում ձեր ներկայացրած դիմումնագրի մշակման ընթացքի հավելյալ ուշացում պատճառել:

Department of Health Care Services
1501 Capitol Avenue, MS 4607
Sacramento, CA 95899-7417

State of California—Health and Human Services Agency

Department of Health Care Services

TOBY DOUGLAS
DIRECTOR

EDMUND G. BROWN JR.
GOVERNOR

Կարևոր տեղեկություն առողջապահական ապահովագրության ձեր դիմումնագրի մասին

Ամսաթիվ՝ 08/14/2014

Սիրելի դիմորդ՝

Շնորհակալություն ձեզ մատչելի առողջապահական ապահովագրության դիմելու համար Կալիֆորնիայում: Մենք գիտենք, որ դուք կամ ձեր ընտանիքի անդամները սպասում են իմանալու, թե այս տարի ի՞նչ առողջապահական ապահովագրություն կարող եք ստանալ, և արդյոք դուք կկարողանա՞ք Medi-Cal-ի նպաստներ ստանալ:

Ի՞նչ կատարվեց իմ առողջապահական ապահովագրության դիմումնագրի հետ:
Մենք ցավում ենք, որ դուք դեռևս մեզանից չեք լսել Medi-Cal-ի ձեր դիմումնագրի վերաբերյալ: Դժբախտաբար, որովհետև մենք ստացել ենք այնքան շատ դիմումնագրեր և համակարգչի հետ կապված խնդիրների պատճառով մենք դեռ չենք վերջացրել բոլոր դիմումնագրերը մշակել: Մենք ցանկանում ենք հայտնել ձեզ, որ ձեր դիմումնագիրը մեզ մոտ է և թե մենք հնարավորին չափ շուտ կկայացնենք մեր որոշումը ձեր և ձեր ընտանիքի առողջապահական ապահովագրության վերաբերյալ՝ հիմնվելով այն տեղեկությունների վրա, որ մեզ եք հայտնել: **Դուք նորից դիմելու կարիք չունեք:**

Իմ դիմումագրի վերաբերյալ նոր տեղեկության կարիք ունե՞ք ինձանից:
Եթե մենք նոր տեղեկության կարիք ունենանք, ձեզ նամակ կուղարկենք՝ պահանջելով մեզ հարկավոր նոր տեղեկության մասին, որպեսզի ավարտենք մեր որոշումը այն մասին, թե արդյո՞ք դուք կկարողանաք Medi-Cal-ի նպաստներ ստանալ: Եթե դուք լրացուցիչ տեղեկություն պահանջող նամակ ստանաք, խնդրում ենք նամակն ուղարկող անձին պատասխանել տալով հարկ եղած տեղեկությունը: Եթե մենք չստանանք այդ տեղեկությունը նամակում նշված ժամանակահատվածում, մենք ստիպված կլինենք մերժել ձեր դիմումը: Մի մտահոգվեք, եթե ձեզանից հավելյալ տեղեկություն չպահանջվի: Դա կնշանակի, որ մենք ունենք ինչը մեզ հարկավոր է, և ձեր դիմումնագիրը կվերանայվի և մենք պատասխանը կուղարկենք անմիջապես որ հնարավոր լինի:

Ես ե՞րբ կստանամ իմ դիմումնագրի պատասխանը:
Հուսով ենք, որ հնարավորին չափ շուտ որոշում կկայացնենք ձեր դիմումնագրի մասին, սակայն չենք կարող որոշակի մի ամսաթիվ ճշտել: Երբ ավարտենք ձեր դիմումնագիրը վերանայելն ու որոշենք, թե առողջապահական ո՞ր ապահովագրությունը դուք կամ ձեր ընտանիքը կարող է ունենալ, դուք նամակի